

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ԿՈՏՈՐԱՅՆԵՐԻ ԶԱՅՆԷ

ՔԱՂՈՒԱՄՆԵՐ ԿԱՐԵՒՈՐ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Հալէպէն վնասանելի աղբիւրէ կը գրուի յուլիս 19 թուականաւ . . . Տիգրանակերտ գաղթողներէն լուր չկայ դժոխք գացողներու պէս. Այնթապի և Քիլիսի գաղթն ալ ազգաբարուեցաւ և գիշեր 51 բնտանիք Այնթապէն հասան. այս կրկին քաղաքաց հայ բնակչութիւնը Գամասկոսի Հաւրան գաւառը կը տեղափոխուի (սոյն գաւառի բնակչութիւնը կիսավայրենի արարներէ և տիւրդիներէ կ'ըրազկանայ):

Ուրփայէն ալ, թերևս Տիգրանակերտցի, ութ հարիւր հոգի հասնելու վրայ են, Քղիէն, Պարբերդէն ևյլն բերուածները Բասիլ-այնէն ուղղակի Տերէլ-Չօր կը գրկուին. հիւանդութիւնը համանարակ է, երկիցս գեղ և նպաստ գրկուեցաւ, սակայն կաթիլ մը սվկիանէն. 20,000-էն աւելի են այդ գաւառի գաղթականք, Հալէպի մէջ համախոնուած են աւելի քան 15,000 և օր ըստ օրէ հեղեղի պէս կը հասնեն:

Անօթութիւնը հիւանդութեան շափ կոտորած կընէ, ամէն կողմ հաց կաղաղակեն: Կամ Քրիստոսի հրաշագործ գօրութիւնը և կամ թագաւորական զանձ պէտք է $\frac{1}{2}$ միլիոն կիլիկեցիք ապրեցնելու համար: Թողունք Ամերիկայի և Եւրոպայի մարդասէրները, ի՞նչ կընեն տարարնակ, Եգիպտարնակ և Ամերիկարնակ հայերը, ժամանակ է որ գաղթականաց հոսանքին պէս նպաստի հոսանքներ կազմուին, աշխարհ տեսած չէ և չպիտի տեսնայ այսքան արհաւիրք, այսքան թշուառութիւն և կարօտութիւն. . . .

Կոտորած, բռնարարութիւնք, երկսեռ մանուկներու անհամար անկանդութիւնք, գեղատես կանանց, հարսներու և կոյսերու վաճառում, մինչև անգամ երեք մեճիգիէի, չհամբուիր և չքաղատուիր. . . . Թորհուրդ տուէք, մենակ եմ, խելք չմնաց

գլուխ, արտասուք շինաց աշքերուս մէջ, գգացում շինաց արտիս մէջ: Զորս կողմս, գիշեր ու ցերեկ մերկութիւն, անօթութենէ նուազում, լաց ու վայնասուն . . . :

(Ստորագրութիւն)

Իսկ յուլիս 28 թուով կը գրուի նոյն ազրիւրէ. «... Ամբողջ ազգը բնաջնջուելու վրայ է: որբանոց շինաց, Տէօրթ եօլի որբանոցը կառավարական պէտքերուն յատկացուած է ու որբերը ցրուած, Հանընինը վաղուց փակուած է, Հասան Գէյլիինը՝ մասամբ, առայժմ կայ Մարաշինը՝ 100 երկսես որբերով, բայց այն ալ պիտի փակուի քանի որ Մարաշի հայերն ալ պիտի ցրուին և արդէն ազդարարուած է: Այնթապէ և Բիլիսի գաղթը սկսած է. Այնթապէն ելած առաջին երկու կարաւանները բոլորովին կողոպտուած էին, մանաւանդ երկրորդը, որ յարձակման ենթարկուած էր և բաղձաթիւ ապանուած և վիրաւոր ունէր: Եթէ միայն Կիլիկիոյ գաղթումն ըլլար 400,000-էն աւելի պիտի ըլլային թշուառութեան մասնուած հայերու թիւը, բայց արև. նահանգներու հարիւր հազարաւոր այրիներէ և երկսես մանուկներէ զատ Թամարգայէն և Նոզդապէն բաղձաթիւ կարաւաններ եկան Հալէպ. հանապարհին ամէնքն ալ կողոպտուած են, հետեարար ամէնքն ալ անօթի են, և կառավարութիւնը խիստ անտարբեր է այս անօթութեան առջև: Ինչպէս նախորդներուն ներկայիս ևս կը կրկնեմ, ազէտքին առաջօր ամնել անկարելի է, դիմում աղաղակ, լաց ու ողբ ոչ միայն անգօր են, նաև ծաղր ու ծանակ ու ծիծաղ կը պատճառեն, միայն աշխատելու ենք ողջ մնացողները ապրեցնելու, հազարաւոր մերկեր ու բոպիկներ կան, ներսերէն եկած այրիներու սանամանները անգամ կողոպտուած էին, ամէնքն ալ մաշուած, վիրաւորուած և ուռած սաքերով հասան, օրական մահերու թիւը անհաշուելի է: Անսահման դուժարներու պէտք կայ հացի, զգեստի, դեղի, բժշկի ևյլն. եթէ պահեստի դուժարներ կան, ինչ անուսով ալ ըլլան, պէտք է այս նպատակին յատկացնել: . . . Աւրֆայի համար ալ արիւնստ լուրեր սկսան հասնել. անգամ 42 երևելիներ, որոց մէջ պատուելիներ և քարոզիչներ, նաև Առաջնորդը նահատակած են. . . անկէ վերջը 17 հոգիի համար ալ ըսուեցաւ: Իրամ հասցուցէք, Տերէլ-Զօրի տասնեակ հազարաւոր հայերը անօթութենէ և հիւանդութենէ կ'ջարդուին»:

Յ. Գ. այն բոպէիս ստոյգ տեղեկութիւն ստինք թէ Մարաշէն 15—45 տարեկան բոլոր այրերը Այնթապ դրկած են դէպի Տեր-Զօր փոխադրելու համար, կը վախցուի որ անոնց կեանքը վտանգի ենթարկուի: Երէկ երեկոյ ալ Սվազի և Կարնոյ շրջակայքը զանուոզ

գիւղերէն 2000-ի շափ աչրի կիներ և որք տղաքներ հասան հաս Տղայոց տարիքը 11-ը շանցներ, հանապարհին առևանդուած տղջիկներ և տղաքներ անհաշուելի են ասոնց ապրելուն հնարաւորութիւն և յոյս չկայ, անհրաժեշտ տարմանի կը կարօտին:

(ՍՈՐՏԱՂՐՈՒՔԻՆԵ)

Սամսոնցի համրորդ մը հետևեալը պատմեց մեզի անձամբ արնիկ Սամսոնցի և՛ և Չարշամպա գինուորական ծառայութիւն կը կատարէի. հոն լսեցինք թէ ամենուրեք հայերը տեղահան կը լլային և համրուէն վրայ զոն կերթային չէթէներուն յարձակմանց և աղջիկներն ու կիները կառևանդուէին և կըլկուէին: Չարշամպացիք սարսափած որոշեցին իսլամանալ առժամարար. կառավարութիւնը նախ ընդունեց և պաշտօնական գործողութիւնք կատարուեցան, բայց յետոյ ամէնքն ալ տեղահան ըլլալով դէպի Մուսուլ քշուեցան յուլիսի սկիզբը. ևս Սամսոն փախայ ընտանիքիս քով, հոն հրամայուեցաւ հայոց վտարումը, տեղացի երևելիներէն 120 ընտանիքի ափշ իսլամութեան դիմեց, սակայն շընդունուեցաւ Առաջնորդ Համազասպ վարդ. իսլամացումի այս միտումը տեսնելով յայտարարեց, զով որ քրիստոնեայ մեալ կուզէ, թող ինձի հետևի, և առաջին առիթով 2 քնյ. և 400 տուն մեկնեցան դէպի Մուսուլ. վերջին խումբը յուլիս 7-ին մեկնեցաւ, որուն մէջ կը գտնուէի ևս ալ ճամբուն թշուառութիւնն ու տառապանքը աննկարագրելի են, առաջին օրերուն իսկ ձերեր և գէրեր համրուէն վրայ մնացին, մայրեր իրենց մանկիկները լքեցին: Աստիկաններուն մտրակը շատերու մահուան պատճառ եղաւ: 8 օրէն հասանք Ամասիա, ուր ոչ մէկ հայու հանդիպեցանք. քանի մը իսլամացած հայ ընտանիքներ, թէև ժամանակ մը մնացած են, սակայն յետոյ պատահած ահուկի հրդեհին պատճառ նկատուելով, անոնք ալ վտարուած են: Փողովուրդին 100-էն 30-ը արդէն փնացած էր երբ հասանք Արզնկիա. հոն ոչ մէկ հայ մնացած էր, ոչ ալ Սերաստիա: Ըսլամի անցագիր մը ձեռք ձգելով, Սերաստիայէն համրորդեցի դէպի Պոլիս գինուորական ազայի մը և Երզնկայէն եկած Գառըին հետ Գառըն հետևեալը պատմեց Վերզնկայի կողմերը հայոց դէմ գործուած արարքները ոչ Գուրանը կընդունի և ոչ ալ շէրիաթը. Երզնկայի կառավարիչ Մէմուտն պէյ հայերը կողոպտելով 50,000 լիբայի (= ոսկւոյ) տէր եղաւ և հիմա ալ ի վարձ իւր գործած վայրագութեանց կուսակալ կարդուեցաւ Քասթէմոնիլ: Արաի մարմարումով կը պատմէր թէ ի՞նչպէս Երզնկայի և շրջականերուն 30,000 է աւելի հայերը բնաջինջ եղան քաղաքէն, կէս ժամ հետու. նայն իսկ կիներ և մանուկներ աղջ

ողջ թաղուեցան, Եփրատ գետը հարիւրաւոր կիներ և այրեր նե-
տուեցան: Հաղարաւոր այր մարդիկ սպանուեցան և բռնաբարուե-
ցան, իսկ մանուկներ թուրքերուն քաժնուեցան: Երկիրքի վրէժ-
խընդրութիւնը ուշ կամ կանուխ պիտի հասնի մեզի՝ կըսէր:

Եկող հանապարհորդներ կը պատմեն թէ Խարրերդէն Սե-
բաստիա, ժամերով և օրերով դիակներու հօտը օղբ բոլորովին
ապակեանած է, մինչև իսկ հանապարհորդներ իրենց ձիերուն շին
կըցած ջուր տայ:

Կեսարիոյ մէջ ցարդ 80-է աւելի մարդիկ կախուեցան, քանի
մը բժիշկներ և երևելիներ, որոնց մէջ է նաև Համբարձում Պոյա-
նեան (Մուրադ), Ազգ. Երեսփոխան և երբեմն Օսմ. Բարձրակէնթի
մէջուս: Կախուողներէն տեղացիները կախողանէն վար անուշու-
պարտականութիւնը իրենց ազգականներուն է, մօրը, հօրը, կնոջը
ևն: Չափահաս անձիկներուն և երիտասարդ կիներուն միայն
խալամութիւնը ընդունեցին:

Տեղահանումը Պոլսոյ դռները արդէն հասաւ, հարիւր հազա-
րաւոր հայեր Պաղդասի երկաթուղիի գծին վրայ լեցուած են
ծայր աստիճան թշուառութեան մէջ և հետզհետէ կ'զրկուին դէպի
Տարսոն—Հալէպ անկէ Միջագետքի և Արարիոյ անապատները
ցրուելու համար: Հասած տեղեկութիւնները ցոյց կուտան թէ
հիւանդութիւնն ու անօթութիւնը այժմէն սկսած են մահերու
պատճառ ըլլայ: Ընկերացող և հակող ժանդարմներու և այլ պաշ-
տօնէից զազթականաց ատուած տանջանքները քստմնեցուցիչ են:

Մեր գիմումներուն վրայ Արմաշի աշակերտները Պոլիս բե-
րուեցան մեզի յանձնուեցան, իսկ վանահայրը, երեք վարդապետ-
ներն և երեք ուսուցիչներն ու սարկաւաղները տարազրկուց խառ-
նուեցան: Արմաշի վանքը իր գոյրերով զբաւեցին և նոյն իսկ
Մեսրոպ եպիսկոպոսին ձախած ոչխարներէն և այլ կենդանինե-
րէն ու գոյրերէն գոյացած 400 ոսկւոյ մօտ գումարը բնի առած
է կառավարական պաշտօնեայր:

Պոլսոյ գաւառացի ամուրիներուն տարազրումն ալ սկսուած է
երկու շաբաթէ ի վեր. ցարդ 4—5000 մարդ տարազրուեցան յան-
կարծական կերպով իրենց զործերը երեսի վրայ ձգելով: Ասոնց
մէջ ընտանիքի տէր ալ կայ: Այսչ և Չանդրի աքսորուածները
ողջ ողջ թաղուած են: Դեսպանատան կողմէ եղած գիմումները
բոլորովին անգօր կիկան:

Ամսոյս սկիզբը սոսկալի ջարդ մը տեղի ունեցած է Էնկիւ-
րիի մէջ, նախ հայոց այր մարդիկը հաւաքելով համբայ հանուած
են և ջարդուած ամբողջովին, իրր 500 մարդ, այնուհետև քաղա-
քին մէջ նախնիրը սկսած է, որուն գոհ գացած են, աւելի քան
5000 հոգի, այր, կին, մանուկ: Սպանուած են 17 երկաթուղոյ

պատճառներով, 10 քնյ. հայ կաթսիկաց, եպիսկոպոսը, մեր առաջնորդական փոխանորդ Քէօզորոս վարդապետը, քահանաներ և յն՝ Յայանի է թէ իրը հայ եկեղեցւոյ զուակ հազիւ 4—500 ասուն կ'գանաւի հոն, մինչ հայ կաթսիկները 2000 ասունէ աւելի են:

Ասոնք իրրև վերջին երեք շաբաթուան լուրեր Չեզ կը հազորդիմ: Պէտք է ընդունել որ մեր կորուստը աւելի պիտի աւելնայ ցորչափ այս հալածանքը շարունակուի և մեր ժողովուրդը ծայրայեղ կարօտութեան մէջ մնալով հետզհետէ հազարաւորներ զոհ պիտի տայ անօթութեան, թշուառութեան, հիւանդութեան և խժոժութեան: Քանի որ քաղաքակիրթ ազգերը այժմեան կացութեան մէջ իրենք իրենցմով միայն կրնան զբաղիլ, մեր մահուան գաղարուձներուն միայն հանդիսատես ևն, առանց կարեւարու ու է կերպով մեր այս առաւազանքներուն մեղմացում մ'իսկ առաջ բերել, աշխատեցէք և զիմեցէք ամէն կողմ թէ արատասահմանի հայութեան և թէ օտար մարդասէրներուն, որ իրենց նիւթական օժանդակութեամբ կեանքեր փրկեն: Զգացուցէք թէ յառաջիկայ ձմեռ հազարաւորներ անօթութեան զոհ պիտի երթան, մեր այս բնաջնջումին ու մահացումին հաշիւը մօտաւոր ապագային կ'մնայ, ազատինք հիմա ինչ որ կրնանք: Նպաստ հասցնելու է, ամենուն սիրաբար քաղխեցէք, մեր մայրերն ու եղբայրները անօթի կ'մեռնեն: Պատրիարքարանը ըրաւ ինչ որ կըրցաւ ցայժմ. մեր ձեռքի տակ գանուած գումարները անխափր կը գործածուին, բայց կարօտութիւնն ու պահանջները այնքան շատ է, որ մեր ունեցած աւանդ գումարներն ալ չբաւեցան: Ըսէք մեր եղբայրներուն, իրենց 10 փարան անդամ հայու մը օրական ապրուստ է, ըստ այսմ զրեցէք Եգիպտոս, Ամերիկա, Ռուսմանիա և ամէն տեղ ուր հայ կայ և ըսէք նաև Պուլկարահայոց զոհողութեան մասը հիմակ է, իր Աստուածն ու ազգը սիրողը թող ձեռք երկարէ մեզի. :

ԱՅՈՐԱԳՐՈՒՄԻՆ

